



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոս, 2021 թվականի N° 50-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N° 45-Լ
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2021 թվականի օգոստոսի 26-ին ներկայացված թիվ Ռ/21-01-79 գրությունը և հաշվի առնելով լսողական ծրագրերի հաղորդացանցերի պարբերական բարելավման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունիսի 30-ի N° 45-Լ որոշման N° 3 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Արևիկ» մայրաքաղաքային սփռման» լսողական ծրագրի՝ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի երրորդ եռամսյակի ավարտը հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման N° 1 հավելվածի:
2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունիսի 30-ի N° 45-Լ որոշման N° 6 հավելվածով հաստատված՝ Ընկերության ՀՀ տարածքում, մերձավոր արևելքի և հարևան երկրներում օտարալեզու լսողական ծրագրի՝ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի երրորդ եռամսյակի ավարտը հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման N° 2 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

30 օգոստոս, 2021 թվականի

ք. Երևան